



Նոյեմբերի 19-ին, Երեխաների բռնության դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ՝ CCMS ՀԿ –ի կողմից, Ալավերդի, Աբրրի, Ախթալա համայնքների դպրոցներում կազմակերպվեց խորագրով շարադրությունների մրցույթ: Մրցույթին մասնակցել են վերընշված համայնքներից, 6 դպրոցների, 10-14 տարեկան 83 աշակերտ: Հաղթող են ճանաչվել յուրաքանչյուր դպրոցից 2-ական աշակերտ՝ 12 շարադրությունների հեղինակներ:

17.11.2016թ.-ին կայացավ միջոցառման մրցանակաբաշխությունը: Հաղթող աշակերտները արժանացան խրախուսական փոքրիկ պարգևների և վկայականների, դպրոցները ակտիվ համագործակցության և աջակցության համար ևս պարգևատրվեցին վկայականներով:

Միջոցառման նպատակն էր բարձրաձայնել խնդիրների առկայության մասին, ինչպես նաև խթանել առողջ և հետաքրքիր քննարկմանը՝ թեմայի շուրջ:

Միջոցառումն իրականացվել է Վորլդ Վիժնի Ալավերդի ՏԶԾ-ի ֆինանսական աջակցությամբ:



